ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 31/8

1 նոյեմբերի 2016թ.

Քննարկվեց «Բաջո-17» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 23.09.2016թ. թիվ 1392/01 որոշման դեմ:

«Բաջո-17» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից կայացված հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին 23.09.2016թ. թիվ 1392/01 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) փոստային բաժանմունքի միջոցով ստացվել է 26.09.2016թ. (հիմք՝ ծրարի վրա առկա կնիքները):

Ծանոթանալով որոշմամբ գանձման ենթակա պարտավորություններին գանգատաբերը տեղեկացել է, որ դրանք ամբողջությամբ առաջացել են ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի կողմից 13.07.2016թ. կայացված հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ թիվ 1218536 որոշմամբ առաջացած պարտավորություններից: Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով Որոշման հետ համաձայն չլինելու պատճառով ներկայացվում է սույն վարչական բողոքը հետևյալ հիմնավորմամբ և պատճառաբանություններով՝

1. Որոշմամբ գանձման ենթակա պարտավորությունների առաջացման ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի ՀՏ պետի 13.07.2016թ. կողմից կայացված հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ թիվ 1218536 որոշումն Ընկերության կողմից վարչական կարգով ՀՀ ԿԱ ՊԵԿ գանգատարկման հանձնաժողովին բողոքարկվել է դեռևս 02.08.2016թ-ին:

2. 30.08.2016թ-ին կայացվել է բողոքարկման հանձնաժողովի նիստ, որին Ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացվել է թիվ 1218536 որոշման հետ համաձայն չլինելու պատճառաբանություններն ու հիմնավորումները:

3. 30.08.2016թ-ի գանգատարկման հանձնաժողովի կայացված որոշումն Ընկերությանը մինչև սույն բողոքը ներկայացնելու օրը դեռևս չի ստացել և տեղեկացված չէ բողոքարկման արդյունքներին: Ավելին, բողոքարկման արդյունքները տեղեկայված չեն նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայքէջին:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 69-րդ հոդվածի՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը: Օրենքի 71-ից 73-րդ հոդվածներով սահմանվում է բողոքարկման կարգը և ժամկետները: Իսկ համաձայն Օրենքի 74-րդ հոդվածի 1-ին կետի՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը: Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Տվյալ փաստական պայմաններում և իրավական հիմնավորմամբ գանգատաբերը գտնում է, որ 23.09.2016թ. թիվ 1392 որոշումն անօրինական է, կայացվել է դրա հիմքում ընկած պարտավորությունների դեռևս կասեցված (օրինական ուժ չունեցող) պայմաններում:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է ամբողջությամբ վերացնել (անվավեր ճանաչել) ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 23.09.2016թ. թիվ 1392 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Բաջո-17» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 01.09.2016թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.162.926 դրամ, որն առաջացել է 13.07.2016թ. թիվ 1218536 վարչական ակտից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ «Բաջո-17» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով: 10.09.2016թ. ընկերության տնօրենը պատշաճ ծանուցվել է վարույթի նյութերին ծանոթանալու համար, սակայն վերջինս չի ներկայացել և որևէ բացատրություն չի տվել:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 23.09.2016թ-ին ընդունվել է թիվ 1392/01 որոշումը «Բաջո-17» ՍՊԸ-ից 1.162.926 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.05.2016թ. թիվ 1218536 հանձնարարագրի համաձայն «Բաջո 17» ՍՊԸ-ում իրականացվել է արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, պատրաստի արտադրանքի, ապրանքների պակասորդի, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում միջին) չափագրման ուսումնասիրություն: Արդյունքում 13.07.2016թ. կայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ թիվ 1218536 վարչական ակտը, որով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25.2 հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 1.162.926 դրամ:

Ընկերության կողմից վերոգրյալ վարչական ակտի դեմ 02.08.2016թ-ին բերվել է գանգատ, որը քննության է առնվել Հանձնաժողովի 30.08.2016թ-ի նիստում: Արդյունքում ընդունվել է թիվ 21/2 որոշումը, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ 13.07.2016թ. թիվ 1218536 վարչական ակտը թողնվել է անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժվել: Հանձնաժողովի 30.08.2016թ-ի թիվ 21/2 որոշումը կողմին է ուղարկվել 01.09.2016թ-ին:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչությունում հարուցված վարչական վարույթի մասին ընկերության տնօրենը 10.09.2016թ. պատշաճ ծանուցվել է, սակայն վերջինս չի ներկայացել և որևէ բացատրություն չի տվել:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ տվյալ դեպքում կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, այն է՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, հարկ է նշել, որ դրանք հիմնավոր չեն, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 23.09.2016թ. թիվ 1392/01 որոշման մեջ նշված է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի դրույթներից ելնելով և հաշվի առնելով հարկային պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ Որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ՝

ա) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.»:

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ 13.07.2016թ. թիվ 1218536 վարչական ակտի դեմ վարչական բողոք բերելը չի կասեցրել բողոքարկվող վարչական ակտի կատարումը, քանի որ վերջինս ենթակա է եղել անհապաղ կատարման:

Միաժամանակ նշվեց, որ սույն գանգատի քննության օրվա դրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 23.09.2016թ. թիվ 1392/01 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունն ընկերության կողմից արդեն իսկ կատարված է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 23.09.2016թ. թիվ 1392/01 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ